Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԹՈՂՈՍ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻ



Նկ. 1 *– Աթենի սբ Սիոն եկեղեցին, (լուս. Architectural Monuments of Georgia N. Janberidze, I. Tsitsishvili, 1996 գրքից)*

Վրաստանում, Գորիից հարավ՝ 8 կիլոմետրի վրա, Քուռ գետի Թանա վտակի բարձրադիր ափին դարերի ծանրության տակ մենակ, լուռ, անխոս կքել է Աթեն (Աթենի) տաճարը:

Գետակի հոսանքով մի քիչ ցած, ժամանակակից գյուղի տեղում մի ժամանակ քաղաք կար, որ դեռևս 9-րդ դարում հիմնադրել էր Աշոտ կուրոպաղատի որդի Բագրատը:

Գիտնականներից ոմանք, օրինակ Դ. Բաքրաձեն, հիմնվելով տաճարի ներսում, սվաղի վրա իր հայտնաբերած 853 թվակիր արձանագրության գոյության փաստի վրա, Աթեն տաճարի կառուցման ժամանակը համարում է 7-րդ դարը: Գիտնականներ էլ կան, որոնք տաճարի կառուցումը թվագրում են 9-11-րդ դարերով:

Ի. Ջավախովը գտնում է, որ ժամանակակից եկեղեցու տեղում սկզբնապես եղել է գմբեթավոր բազիլիկ եկեղեցի՝ Սիոն, որը հետագայում, մինչև 853 թվականը վերակառուցվել, դարձել է հիմքում խաչաձև եկեղեցի, ստանալով այն տեսքը, որն ունի մեր օրերում:

Այժմ լույս տեսնող հանրագիտարաններում, ճարտարապետության պատմության դասագրքերում Աթեն տաճարի կառուցման ժամանակը նշված է 7-րդ դարը:

Դեռևս անցյալ դարի կեսերին Աթեն տաճարով զբաղվել են հայտնի գիտնականներ Դյուբուա դե Մոնպերեն և Մ. Բրոսսեն: Դյուբուայի կարծիքով «հայ ճարտարապետի կողմից այս եկեղեցու հատակագիծը վերցվել է Վաղարշապատի կամ Էջմիածնի հռչակավոր սբ. Հռիփսիմե եկեղեցու, Հայաստանի և Վրաստանի շատ եկեղեցիների այդ նախօրինակի հատակագծից. Մարտվիլու եկեղեցին... դրանցից մեկն է, սակայն այն արդեն փոխարկվել է վրացական ոճի... Սիոնի եկեղեցում ամեն ինչ ճշտորեն հայկական է. գմբեթն ավելի լայն է, բայց սեղմված համաչափություններով, լուսավորվում է չորս փոքր պատուհաններով. Սիոնի թաղն ունի հայկական մեծ խաչի ձև»: Դ. Բաքրաձեն գտնում է, որ Աթեն տաճարի «ճարտարապետական և քանդակագործական ոճը, գմբեթի ձևը և ինքը՝ հատակագիծը հիշեցնում է Մցխեթի դիմաց գտնվող խաչի եկեղեցին»:

Ժամանակակից արվեստագետներից Գ. Չուբինաշվիլին գտնում է, որ Աթեն տաճարը Մցխեթայի սբ. Խաչի Մեծ եկեղեցու ընդօրինակումն է: Նրա այս տեսությունը վրաց արվեստի շրջանակներում այժմ դարձել է տիրապետող կարծիք:

Դյուբուա դե Մոնպերեն ու Մարի Բրոսսեն իրենց ժամանակին Աթեն տաճարի նյութերի շարքում հրատարակել էին նաև հարավային պատի վրա հայերեն խոշոր գլխատառերով փորագրված կառուցող ճարտարապետի արձանագրությունը:

«Վրացական Աթեն տաճարի կառուցման ժամանակի հարցի վերաբերյալ»[1] իր հայտնի հոդվածում Ի. Ջավախովը գրում է. «Մի բան հաստատ կարելի է ասել, որ տաճարի կառուցողը եղել է հայ ճարտարապետ, այդ երևում է կառուցողի հայերեն արձանագրությունից, որը խոշոր գլխատառերով փորագրված է այն նույն պատի վրա, որի վրա է բերված վրացերեն փորագիր 1060-1068 թթ. արձանագրությունը» (էջ 294):

Ահա այդ արձանագրությունը, որ արտագրել և լուսանակարի հետ տեղադրել է իր հոդվածում աշխատության հեղինակը:

ԵՍ ԹՈԴՈՍ [ ] ՇԻ[Ն]ՈՂ ՍՐԲՈՅ ԵԿԵՂԵ

Ի. Ջավախովը ենթադրում է, որ Թոդոսը թերևս նախկին Սիոնի, և ոչ ժամանակակից եկեղեցու կառուցողն է: Այժմ, սակայն, մասնագետները չեն բաժանում Ի. Ջավախովի կարծիքը Աթեն եկեղեցու երկու հերթում կառուցված լինելու վերաբերյալ, Թոդոսին էլ համարում են մեր օրերում կանգուն եկեղեցու կառուցող:

Գ. Չուբինաշվիլին իր «Ջվարիի տիպի հուշարձաններ» հայտնի աշխատության մեջ մեծ տեղ է հատկացրել Աթեն տաճարին և մի առանձին բաժին՝ հատկապես ապացուցելու համար, թե այս եկեղեցին հանդիսանում է Ջվարիի կրկնությունը: Նա գրում է «... ճարտարապետության պատմության մեջ թերևս եզակի դեպքն է, երբ արվեստի գլուխգործոցը ընդօրինակվում է ամենայն ճշտությամբ, բայց առանց հասկանալու գեղարվեստական կողմը, և առանց համապատասխան զգացողության»:

«Աթենի Սիոնի ճարտարապետը, - շարունակում է Գ. Չուբինաշվիլին, - կուրորեն օգտագործում է ընդօրինակվող օրինակը: Միայն մի բանում է նա ցուցաբերում որոշ ինքնուրույնություն, այդ տաճարի քանդակազարդումն է: Անկասկած նա ցանկացել է ի ցույց դնել իրեն, իբրև քանդակագործ... թերևս սա է բանալին բացելու այն

[1] И. Джавахов, К вопросу о времени построения грузинского храма Атен по вновь обследованным эпиграфическим памятникам. – Христианский Восток, т. I, выпуск III, СПБ, 1912, с. 277-297.

գաղտնիքը, թե ինչպե՞ս կարող էին Աթենին կառուցելու համար դրսից հրավիրել այդ անքանաքար ճարտարապետին...: Իսկ ինչ վերաբերում է ճարտարապետության պատկերին, ապա նա թեթևացրել է իր խնդիրը, պարզապես կրկնել է երկրի մայրաքաղաքում հենց նոր կառուցումն ավարտած, երկրի հանընդհանուր ուշադրությունն իրեն գրաված գլուխգործոցը՝ Մցխեթայի Ջվարին»:

Գ. Չուբինաշվիլին իր այս աշխատության մեջ մի քանի տասնյակ անգամ, ձանձրացնելու և զայրացնելու աստիճան անընդհատ կրկնում ու տարբեր ձևերով անպատշաճ պիտակներով պախարակում է Թոդոսին, մի ճարտարապետի, որի կառուցած տաճարին նվիված իր հայտնի հոդվածը Ի. Ջավախովը սկսում է «*Աթենի հռչակավոր տաճարը ըստ արժանավույն համարվում է արվեստի կարևոր և հետաքրքիր հուշարձաններից մեկը Վրաստանում...*» դրվատական խոսքերով: Ճարտարապետ Մ. Չխիկվաձեն 1940 թվականին Մոսկվայում հրատարակված իր «Ջվարիի ճարտարապետությունը» աշխատության 22-րդ էջում գրում է «*... այստեղ [Աթենիում] մի ամբողջ շարք կոնստրուկտիվ հարցեր ավելի լավ են լուծված, քան Ջվարիում...*»:

Աթեն տաճարի արտաքին ու ներքին տեսքն արտահայտող մեծադիր լուսանկարներն ամենուրեք Վրաստանի ցուցահանդեսներում, թանգարաններում շարունակ ցուցադրվում են, ճարտարապետության պատմության բոլոր հեղինակների աշխատություններում տեղադրվում անմիջականորեն Ջվարիի լուսանկարների կողքին, որպես նույնարժեք գործ, սակայն, ի զարմանս ամենքի, Գ. Չուբինաշվիլին և ուրիշներ շարունակ չարախոսում են, վատաբանում նրա ստեղծող-կառուցողին, չհիշատակելով նույնիսկ անունը: Նման վերաբերմունքը, իրոք պատվաբեր չէ:

Այս հոդվածի նպատակներից դուրս է Ջվարի և Աթեն տաճարների փոխհարաբերության հարցի քննարկումը, թե ո՞րն է սկզբում կառուցվել, կամ ո՞ր մեկն է մյուսի կրկնությունը, և կամ կարո՞ղ էր Աթեն տաճարի պես շինության բազմահմուտ կառուցողը «կուրորեն կրկնել» կառուցումը հենց նոր ավարտած մի այլ տաճարի, եթե

նաև առաջինի հեղինակը ինքը չլիներ:[2] Այստեղ չի նայվում նաև այն հարցը, արդյոք Թոդոսը «դրսից հրավիրված» էր, թե՞ իր ժամանակի անվանի ճարտարապետ լինելով կառուցել է ոչ միայն Աթենը, այլև նույն ժամանակների այն բազմաթիվ հուշարձաններից շատերը, որոնք գտնվում են Աթենի մոտերքում ու թերևս այլուր:

Այստեղ մեզ հետաքրքրողը միջնադարի մեծ ճարտարապետ Թոդոսի հետագա ճակատագիրն է, որ ահա ներկայացնում ենք ընթերցողին:

Գ. Չուբինաշվիլին Աթեն տաճարին ու նրա կառուցողին շատ էջեր է հատկացրել իր վերոհիշյալ «Ջվարիի տիպի հուշարձաններ» գրքում, և մյուս արձանագրությունների հետ բերում է նաև Թոդոսի արձանագրությունը (էջ 116), սակայն ցավոք ալբոմում բերված լուսանկարից (66 բ) բառացիորեն ոչինչ չի հասկացվում:

Ցավով պետք է նշել, որ այդ պատմական, շատ տեսակետներից մեծ կարևորություն ներկայացնող արձանագրությունը, որ գոյություն ուներ հարյուրավոր տարիներ ի վեր, մոտ անցյալում չարագործ անձանց կողմից երկաթե գործիքով տաշվել, ոչնչացվել է, մնացել է նրա աջ մասի խղճուկ հետքը միայն, իսկ «Թոդոս» անվան այդ հետքն էլ չկա: Այնպես որ հուշարձանն այցելող մարդը զրկվել է այդ արձանագրությունը տեսնելու, կարդալու և կառուցողի անունն իմանալու հնարավորությունից:

Այս տխուր փաստն ամենևին չի անհանգստացրել հուշարձանների պահպանությամբ զբաղվող պետական հիմնարկի աշխատողներին. դեռ ավելին, նրանք գործը հասցրել են ավարտի՝ հուշարձանի պատին ամրացրել են մետաղե տախտակ, ձուլածո տառերով գրել համառոտ անոտացիա, գրել զանազան մանրամասնություններ, նշել այլ արձանագրությունների գոյության փաստը, սակայն, ո՞վ զարմանք, «մոռացել» են այնտեղ գրել տաճարը կառուցողի, խոր միջնադարից մեզ հասած ճարտարապետ Թոդոսի անունը:

1967 թվականին ճոխ հրատարակությամբ լույս է տեսել Վրաստանի ժամանակակից անվանի արվեստագետներից մեկի՝ Վախթանգ Բերիձեի «Վրացական ճար-

[2] Տե՛ս Գ. Չուբինաշվիլի, Ջվարիի տիպի հուշարձաններ, ալբոմ, էջ 31, խաչի պատվանդանի բեկորի լուսանկարը հայերեն արձանագրությամբ «Թ» գլխատառով:

տարապետություն» նոր աշխատությունը, որտեղ շատ հուշարձանների թվում տեղ է հատկացված Աթեն տաճարի նյութերին, գրված է ընդարձակ անոտացիա, և այստեղ էլ հեղինակը հնարավոր չի համարել հիշատակել կառուցող ճարտարապետի անունը: Մյուս հուշարձաններին նվիրված անոտացիաներում, իհարկե, ըստ արժանվույն հիշվում են այն կառուցողները, որոնց անունները այս կամ այն կերպ պատմությունը պահպանել է, այդպիսիների թվում են, օրինակ, Կումուրդոյի կառուցող Սաքո-ցարին (թերևս՝ Սարգիսը) (էջ 46), Օշկի կառուցման ղեկավար Գրիգոլը (Գրիգոր) (էջ 47), Սվետի-ցխովելու կառուցող Արսուկիձեն (Արշակ) (էջ 48), Սամտավիսիի կառուցող (ենթադրաբար) Իլիարյոնը (էջ 50), Իշխանի երկու վերակառուցողներ Սաբան (Սահակը) և Մորչախսձեն (բայց ոչ կառուցող Ներսեսը) (էջ 51), Խցիսիի կառուցող Անանիան (էջ 53), Սավանայի կառուցող Արաբը (էջ 54), Ուբիսիի կառուցող Սիմեոն Չկոնդիդին (էջ 55) և այլք:

Արդարությունը պահանջում է հիշեցնել, որ նույն Վախթանգ Բերիձեն տարիներ առաջ՝ 1948 թվականին իր մի այլ, ծավալով շատ ավելի փոքր «Վրաստանի ճարտարապետությունը» աշխատության մեջ (էջ 27) գրել է «... Գորիի շրջանի գեղատեսիլ վայրում, Ջվարիին բավական մոտ, հայ ճարտարապետ Թոդոսի կողմից 7-րդ դարում կառուցված Աթենիի Սիոնը ...» և այլն: Ինչպես երևում է, հեղինակը որոշ հանգամանքների պայմաններում զղջացել է, որ մի ժամանակ այդպես է գրել, այժմ վերակառուցվել, «շտկել է» նախկինում թույլ տված «սխալը» աշխատության նոր հրատարակության մեջ կառուցող Թոդոսի հարցը պարզապես բաց թողնելով:

Թոդոսի նկատմամբ եղած վերաբերմունքը նույնությամբ կրկնվում է նաև Մոսկվայում տպագրվող համաշխարհային նշանակության հրատարակություններում: Այսպես, 1962 թվականին լույս տեսած «Գեղարվեստի համառոտ հանրագիտարանի» Վրաստանին նվիրված բաժնում թվարկված 70 հին ու նոր ականավոր նկարիչ-քանդակագործների և ճարտարապետների ցանկում (տես էջ 636-642) չկա հռչակավոր Աթեն տաճարի կառուցող Թոդոս ճարտարապետի անունը: Այստեղ ևս հոդվածագիրը Վ. Բերիձեն է, բոլոր հոդվածների խմբագիրը՝ Գ. Չուբինաշվիլին:

Ահա և մի այլ օրինակ. 1966 թվականին հրատարակված «Ճարտարապետության համընդհանուր պատմության» Վրաստանի ճարտարապետության նվիրված գլխում հոդվածի հեղինակ Գ. Չուբինաշվիլին սիրով տեղադրել է Աթեն տաճարի ներքին հոյակապ տեսքը պատկերող լուսանկարը (էջ 315, նկ. 9), տեքստում, սակայն, նրա հեղինակ-կառուցողին անվանում է «անօգնական ճարտարապետ», արժանի չհամարելով նրա անվան հիշատակումն անգամ:

Վերը բերված փաստերը, որ բնութագրում են առանձին հետազոտողների անբարյացկամ վերաբերմունքը միջնադարի մեծ ճարտարապետ Թոդոսի հիշատակի նկատմամբ, ոչ մի պայմանով չպետք է արտահայտվեր հատկապես «Ճարտարապետության համընդհանուր պատմության» էջերում:



Նկ. 2 *– Աթենի եկեղեցու ճարտարապետ Թոդոսի քերված արձանագրությունը (լուս. Սամվել Կարապետյանի)*

Մեր պայմաններում, բարեբախտաբար, ամենայն գիտակցված սխալ ենթակա է շտկման, և այդ, մեր համոզմամբ, պետք է տեղի ունենա նաև այս դեպքում: Դրա համար

անհրաժեշտ է, որ Վրաստանի կերպարվեստի և կուլտուրայի պահպանության վարչությունը հնարավոր դարձնի՝ ա. վերականգնել Աթեն տաճարի Թոդոսի արձանագրությունը նույնությամբ, բ. տաճարի հյուսիսային պատի վրա փակցված հուշատախտակը փոխարինել նորով, որտեղ հիշատակվի կառուցող Թոդոսի անունը, գ. հետամուտ լինել, որ ճարտարապետության պատմությանը նվիրված նոր հրատարակություններում և հանրագիտարաններում Վրաստանի միջնադարյան հուշարձանները ստեղծող մյուս ճարտարապետների շարքում հիշվի նաև Թոդոսը: Անհրաժեշտ է, որ Թոդոսի անունը հիշատակվի հայկական հանրագիտարանում, որի հրատարակությունը նախապատրաստվում է այժմ:

Այս միջոցառումների իրականացումը մեր պարտքն է միջնադարի դասական արվեստի և այն ստեղծող լուսավոր դեմքերից մեկի՝ Թոդոսի նկատմամբ:

16.6.1967 Տ. ՄԱՐՈՒԹՅԱՆ